ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐ Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՎ ՔԱՐՈԶ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ՝ ՓՐԿՉԻ ՀՐԱՇԱՓԱՌ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԹԻՎ

Ապրիլի 14-ին, կիրակի.—Զատիկ. Յարութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի:

Գարնանային բուրումնավետ առավոտ է բացվել Արարատյան դաշտի վրա:

Վաղ առավոտվանից հավատացյալների և ուխտավորների հոծ բազմությունը լցրել է Մայր տաճարն ու նրա շրջափակը՝ մասնակցելու համար մեր եկեղեցական և ազգային մեծ տոնի՝ Զատկի հանդիսություններին:

Ժամը 11-ին ուրախ ու տոնական զողանջում են Մայր տաճարի զանգերը: Վեհափառ Հայրապետը, քահանայապետական փառահեղ զգեստավորման մեջ, Մայր Աթոռի միաբանության ուղեկցությամբ, հանդիսավորապես Վեհարանից առաջնորդվում է Մայր տաճար՝ մատուցելու զատկական սուրբ պատարագը:

Սկսվում է սուրբ պատարագը, որի երգեցողությունը կատարում է Մայր տաճարի երգչախումբը:

«Հայր մեր»-ից առաջ, ս. Զատկի առթիվ, Վեհափառ Հայրապետը խոսում է կրոնաշունչ և հայրենաբույր մի քարոզ, որը նույն օրը, երեկոյան ժամը 23.30-ին, ձայնափոխվում է Երևանի ռադիոկայանից:

Հայրապետական սույն քարոզը տպագրվել է «Էջմիածին» ամսագրի սույն համարում (էջ 8):

Ս. պատարագի ավարտին Վեհափառ Հայրապետը եկեղեցական թափորով առաջնորդվում է Վեհարանի գահասրահ:

Հանուն Մայր Աթոռի միաբանության և ներկա ողջ հավատացյալների, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանը շնորհավորում է Ն. Ս. Օծության Զատիկը, ցանկանում Նրան երկար ու երջանիկ օրեր՝ ի փառս Մայր Աթոռի պայծառության:

Այնուհետև Վեհափառ Հայրապետը շնորհավորում է ողջ հայության այս մեծ տոնը, օրհնում հայ եկեղեցին, ազգը, հայրենիքում և ի սփյուռս աշխարհի, ցանկանում նրան խաղաղ ու բարգավաճ օրեր:

Ներկաներն աջահամբույրով շնորհավորում են Հայոց Հայրապետի Զատիկը:

Զատկական հանդիսությունն ավարտվում է Վեհափառ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

Ժամը 15-ին Վեհարանի սեղանատանը տրվում է զատկական ճաշկերույթ: